

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ ՀԿ



Հանրային շահի պաշտպանությունը ՀՀ-ում

Ներպետական դատարաններում հանրային շահի պաշտպանության
նպատակով հասարակական կազմակերպությունների և
միավորումների կողմից հայցի հարուցման հնարավորությունները

Վանաձոր
2013

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ներպետական օրենսդրության ուսումնասիրության արդյունքները.....	4
• Պետական մարմինների՝ հանրային շահի պաշտպանությանն ուղղված գործառույթները .4	
• Հասարակական միավորումների կողմից իրենց նպատակների լիարժեք և արդյունավետ իրականացման շրջանակներում կոլեկտիվ և հանրային շահերի պաշտպանության նպատակով, դատական կարգով այդ շահերի պաշտպանության հնարավոր օրենսդրական կարգավորումների ուսումնասիրության արդյունքները:.....	6
1. ՀՀ Սահմանադրություն	6
2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք	7
3. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք.....	8
4. ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ.....	8
Օտարերկրյա օրենսդրության ուսումնասիրության արդյունքները	10
I. Ո՞րն է այն խնդիրների շրջանակը, որոնք կարող են վիճարկվել դատարանում՝ որպես հանրային շահ հանդիսացող խնդիր, ինչպե՞ս կարող է խնդիրը ճանաչվել հանրային շահ հանդիսացող:.....	10
II. Ո՞վ կարող է ունենալ հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունք: Ո՞վ կարող է հանդիսանալ հանրային շահի պաշտպանության նպատակով հարուցված հայցով պատասխանող:	10
III. Դատական ո՞ր մարմիններում և ատյաններում է կարելի հանրային շահի պաշտպանության նպատակով հայց հարուցել, ի՞նչ ընթացակարգով է կատարվում գործի քննությունը, որո՞նք են դատական գործի քննության հիմնական սկզբունքները:.....	13
IV. Իրավական ո՞ր նորմերով (նյութական, դատավարական) է հնարավոր և անհրաժեշտ սահմանել հանրային շահի պաշտպանության նպատակով հայցի հարուցման իրավունքը և ընթացակարգերը:.....	13
V. Ինչպես են լուծվում դատական ծախսերի հետ կապված հարցերը հանրային շահի պաշտպանության նպատակով դատական գործեր հարուցելու դեպքում:.....	13
Միջազգային իրավունքի նորմեր.....	14
Առաջարկություններ.....	15

Ներածություն

Հանրային շահի կամ կոլեկտիվ շահերի (այսուհետ՝ հանրային շահ) պաշտպանության նպատակով իրավունքի խախտման անմիջական գոհ չհանդիսացող անձանց կողմից դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով սույն փաստաթղթի մեջ ուսումնասիրվել է ՀՀ ներպետական օրենսդրությունը, վերաբերելի միջազգային իրավունքի նորմերը, օտարերկրյա պետությունների օրենսդրությունը:

Ներպետական օրենսդրության ուսումնասիրության հիմնական նպատակն է եղել պարզել, թե արդյոք այս իրավունքը ամրագրված է ներպետական գործող օրենսդրության շրջանակներում, եթե այո, ապա ինչ կարգավորումներ է այն առաջարկում, եթե ոչ, ապա արդյոք օրենսդրության կարգավորումներում առկա են դրույթներ, որոնք կարող են խոչընդոտել հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի ամրագրմանը:

Միջազգային փորձի ուսումնասիրությամբ նպատակ է դրվել պարզել, թե ինչ կարգավորումներ են առաջարկվում միջպետական մարմինների և կառույցների կողմից ներպետական օրենսդրության մեջ ամրագրելու համար: Օտարերկրյա փորձի ուսումնասիրության հիմնական նպատակն է եղել վեր հանել այն մեխանիզմները և հնարավորությունները, որոնք կարելի է կիրառել ՀՀ ներպետական օրենսդրական կարգավորումների շրջանակներում ուսումնասիրության առարկա հանդիսացող իրավունքի ամրագրման նպատակով:

Այլ երկրների օրենսդրության վերլուծությունը իրականացվել է «Latham and Watkins»¹ փաստաբանական գրասենյակի կողմից Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի խնդրանքով «PILnet: The Global Network for Public Interest Law»² ծրագրի աջակցությամբ և շրջանակներում: Ուսումնասիրվել են Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռուսաստանի ներպետական օրենսդրությունները: Սույն փաստաթղթի մեջ «Օտարերկրյա օրենսդրության ուսումնասիրություն» վերնագրի ներքո ամփոփ կերպով ներկայացված են վերը նշված օրենսդրական վերլուծության հիմնական եզրահանգումները:

¹ Տե՛ս՝ www.lw.com

² Տե՛ս՝ <http://www.pilnet.org/>

Ներպետական օրենսդրության ուսումնասիրության արդյունքները

ՀՀ ներպետական օրենսդրության ուսումնասիրության շրջանակներում առաջին հերթին նպատակ է դրվել պարզել, թե որպես պետության կողմից իրականացվող գործառույթ և թե որպես ոչ պետական մարմինների կողմից իրականացվող գործունեություն, հանրային շահի պաշտպանության ինչ մեխանիզմներ են սահմանված ՀՀ օրենսդրությամբ:

• Պետական մարմինների՝ հանրային շահի պաշտպանությանն ուղղված գործառույթները

Որպես պետական մարմինների՝ քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության շրջանակներում հանրային կամ համայնքային շահերի պաշտպանությանն ուղղված գործառույթներ կարելի է առանձնացնել.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (հետայսու՝ ՀՀ ՎԴՕ) սահմանված՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց՝ ընդդեմ վարչական մարմնի դիմում ներկայացնելու լիազորությունը, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա.

- վարչական մարմինների և պաշտոնատար անձանց դատարան դիմելու լիազորությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն դատարանը.

- վարչական մարմինների և պաշտոնատար անձանց դատարան դիմելու լիազորությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին.

2. Դատախազի կողմից դատարանում մեղադրանքի պաշտպանության լիազորությունը.

3. ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունը դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի լուծման նպատակով:

Այսպիսով, Քաղաքացիական դատավարության շրջանակներում ՀՀ պետական մարմինների կողմից դատարանում հանրային շահի պաշտպանության նպատակով հայց հարուցելու օրենսդրական կարգավորումները բացակայում են, քրեական դատավարության շրջանակներում սահմանափակվում են դատախազի կողմից մեղադրանքը պաշտպանելու լիազորություններով:

Վարչական դատավարության շրջանակներում այլ անձանց իրավունքների, հանրային և համայնքային շահի դատական պաշտպանությանն ուղղված գործառույթներից կարելի է մասնավորապես առանձնացնել հետևյալ մարմինների լիազորությունները.

- ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի լիազորությունը դիմել դատարան «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումների վերաբերյալ, այդ թվում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ընդունած ակտերը, տնտեսվարող սուբյեկտների՝ օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաև այդ պայմանագրերի փոփոխման կամ լուծման պահանջով

- Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի լիազորությունը նախընտրական քարոզչության՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը և նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում դիմել դատարան՝ տվյալ հեռուստառադիոընկերությանը (հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը) օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հայցով

- Մարզպետի լիազորությունը դիմելու դատարան՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու, կամ համայնքին՝ պարտավորեցնելու համապատասխան գործողություն կատարելու համար:

Այսպիսով, չնայած ՀՀ օրենսդրությամբ սահմանված է վարչական մարմինների կողմից այլ անձանց կամ միավորումների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության որոշակի դեպքեր, սակայն դատական պաշտպանության վերոնշյալ դեպքերը չեն ներառում մի շարք կարևոր ոլորտներում անձանց խմբերի իրավունքների պաշտպանությունը:

• *Հասարակական միավորումների կողմից իրենց նպատակների լիարժեք և արդյունավետ իրականացման շրջանակներում կոլեկտիվ և հանրային շահերի պաշտպանության նպատակով, դատական կարգով այդ շահերի պաշտպանության հնարավոր օրենսդրական կարգավորումների ուսումնասիրության արդյունքները:*

1. ՀՀ Սահմանադրություն

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին մասով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածով սահմանված է յուրաքանչյուրի համար իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հաշվի առնելով, որ ուսումնասիրվող հարցի շրջանակներում հետաքրքրություն ներկայացնող այս հոդվածներով ուղղակիորեն սահմանված չէ հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքը, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը անդրադառնալով սույն հոդվածներին, իր իրավական դիրքորոշումն է հայտնել 07.09.2010 թ. թիվ 906 որոշման մեջ, մասնավորապես արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են³: Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը⁴:

³ ՀՀ Սահմանադրական դատարանի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝ հայաստանի հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 07.09.2010 թ. թիվ 906 որոշում, 5-րդ կետ, 9-րդ պարբ. առաջին նախադասություն

⁴ 07.09.2010 թ. թիվ 906 որոշման 6-րդ կետի առաջին պարբ. առաջին նախադասություն

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՀՀ քաղ. դատ. օր.) 2-րդ հոդվածի առաջին մասի՝ **շահագրգիռ անձն** իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Իսկ ըստ ՀՀ քաղ. դատ. օր-ի 2-րդ հոդվածի երկրորդ մասի՝ **նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար** իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք:

ՀՀ քաղ. դատ. օր-ի 2-րդ հոդվածի կարգավորումների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է հայտնել ՀՀ Սահմանադրական դատարանը իր 07.09.2010 թ. թիվ 906 որոշման մեջ: Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ ՀՀ քաղ. դատ. օր-ի 2-րդ հոդվածը դատարան դիմելու իրավունք է վերապահում շահագրգիռ անձանց: ՀՀ քաղ. դատ. օր-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ շահագրգիռ անձանց ներքո հանդես են գալիս նախ և առաջ այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել: Միննույն ժամանակ, մի շարք դեպքերում ՀՀ քաղ. դատ. օր-ը սահմանել է նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը՝ որպես շահագրգիռ անձի իրավունք: Մասնավորապես, վերջինս վերաբերվում է օրինական ներկայացուցչին⁵:

Իսկ 04.04.2008 թ. թիվ 747 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը եւ պարզելու, թե արդյոք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

Այսպիսով ՀՀ քաղ. դատ. օր-ի 2-րդ հոդվածով սահմանված՝ «շահագրգիռ անձ» հասկացության ներքո կարելի է դիտարկել նաև հասարակական կազմակերպություններին, քանզի, հասարակական կազմակերպությունը, ելնելով նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից «հասարակական կազմակերպություններ» հասկացության սահմանումից, հանդիսանում է ֆիզիկական անձանց միավորումը այդ անձանց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

⁵ 07.09.2010 թ. թիվ 906 որոշման 5-րդ կետի երրորդ պարբ. առաջին նախադասություն

Բացի այդ ՀՀ քաղ. դատ. օր-ի 2-րդ հոդվածով հնարավորություն է վերապահվել նաև այլ անձանց իրավունքերի, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի ամրագրումը այլ օրենքներով:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք

ՀՀ ՎԴՕ 3-րդ հոդվածով հստակ սահմանված է վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ցանկը:

Մասնավորապես ՎԴՕ 3-րդ հոդվածով սահմանված է, որ նույն օրենսգրքով սահմանված կարգով վարչական դատարան իրավունք ունի դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Այսպիսով ՀՀ Վարչական դատավարության օրենսդրությամբ որևէ կերպ ամրագրված չէ այլոց շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու իրավունքը:

4. ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ

ՀՀ Սահմանադրական դատարանը անդրադարձել է ՀՀ ներպետական օրենսդրությամբ հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու հնարավորության խնդրին իր 07.09.2010 թ. թիվ 906 որոշման մեջ: Մասնավորապես, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օր-ի 3-րդ հոդվածի պահանջները, պետության ներսում հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակականության ինստիտուտների նշանակությունը, ՀՀ Սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը՝ «Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով

վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը»⁶:

ՀՀ Սահմանադրական դատարանը արտահայտել է իր դիրքորոշումը վերը նշված որոշման իրավակիրառ պրակտիկայում և օրենսդրության մեջ ներառելու վերաբերյալ, մասնավորապես արձանագրելով, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումներին հնարավորություն պետք է ընձեռվի հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ կանոնադրական նպատակների շրջանակում է⁷:

Բացի այդ Սահմանադրական դատարանը իր Տարեկան հաղորդման մեջ արձանագրել է, որ քաղաքացիական հասարակության կայացումը մեր երկրում հայտարարելով որպես առաջնահերթ նպատակ, այսուհանդերձ, դեռևս չեն ստեղծվել անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներ հասարակական կազմակերպություններին ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում դատավարական իրավասուբյեկտությամբ օժտելու համար⁸:

⁶ 07.09.2010 թ. թիվ 906 որոշման 7-րդ կետի երրորդ պարբ.

⁷ Տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի հաղորդում 2012 թ. ընդունված որոշումներ կատարման վիճակի վերաբերյալ, Հունվար 2013, ք. Երևան 2012 թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ Հաղորդում, Հունվար 2013, Երևան

⁸ Տես՝ նույնը

Օտարերկրյա օրենսդրության ուսումնասիրության արդյունքները

I. Ո՞րն է այն խնդիրների շրջանակը, որոնք կարող են վիճարկվել դատարանում՝ որպես հանրային շահ հանդիսացող խնդիր, ինչպե՞ս կարող է խնդիրը ճանաչվել հանրային շահ հանդիսացող:

1. Որպես կանոն հստակ սահմանված չէ, թե որն է հանդիսանում հանրային շահ:
2. Կարելի է արձանագրել, որ որպես հանրային կամ կոլեկտիվ շահ հաճախ դիտարկվում են.
 - Երեխաների կամ հաշմանդամների իրավունքների հիմնախնդիրները;
 - Պետական աճուրդների արդյունքները (ինչպես օրինակ՝ հողի սեփականաշնորհման ակտեր);
 - Պետական և համայնքային պայմանագրերը և գործողությունները;
 - Էկոլոգիական վնասի հատուցման և բնապահպանական անվտանգության կանոնների պահպանման հիմնախնդիրները;
 - Երթևեկության ապահովության և ճանապարհների վիճակի հիմնախնդիրները;
 - Անձնական տվյալների պաշտպանության հիմնախնդիրները;
 - Վահանակների կամ համացանցի միջոցով տարածված անօրինական և բարոյագուրկ գովազդի վերացման պահանջները;
 - Շինությունների կամ այլ կառույցների կառուցման կամ փլուզման պահանջը, որն ընթանում է շինարարության և էկոլոգիական նորմերի, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանման նորմերի և քաղաքաշինության պահանջների խախտմամբ;
 - Սպառողների իրավունքների հիմնախնդիրները;
 - Որոշակի խտրականության դրսևորման հիմնախնդիրները:

II. Ո՞վ կարող է ունենալ հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունք: Ո՞վ կարող է հանդիսանալ հանրային շահի պաշտպանության նպատակով հարուցված հայցով պատասխանող:

1. Չնայած դիտարկված երկրների օրենսդրական կարգավորումների շրջանակում գործում է մեկ ընդհանուր սկզբունք՝ այն է յուրաքանչյուր դեպքում անձը իրավունք ունի դատական հայց հարուցել իր ենթադրաբար խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ ամեն դեպքում յուրաքանչյուր երկրում առկա են որոշակի բացառություններ, որոնք թույլ են տալիս որոշակի անձանց հայց հարուցել նաև այլ անձանց կամ հանրային շահի պաշտպանության նպատակով:

2. Հանրային շահի պաշտպանությամբ կարող են հանդես գալ կոնկրետ հանգամանքների առկայության դեպքում միավորումները, ինչպես նաև այլ տեսակի կազմակերպությունները, որոնք իրավունք ունեն դիմել իրենց անդամների և իրենց գործունեության ոլորտում առավել լայն խմբերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ, երբ նման հարցերի շուրջ հանրային շահի պաշտպանության նպատակով հայց ներկայացնելու իրավունքը ուղղակիորեն սահմանված է օրենսդրությամբ:

3. Որոշ դեպքերում «հանրային շահ» հասկացության հետ հավասարազոր դիտարկվում է նաև «կոլեկտիվ շահեր» հասկացությունը:

Քաղաքացիական իրավունքի շրջանակներում

4. Քաղաքացիական իրավունքի շրջանակներում տվյալ երկրում հանրային շահի պաշտպանության նպատակով, որպես կանոն կարող է հայց հարուցվել որոշակի կազմակերպությունների կողմից: Օրինակ, Ֆրանսիայում՝ միավորման կողմից իր անդամների կոլեկտիվ շահերի պաշտպանության նպատակով որպես ընդհանուր կանոն հայց կարող է հարուցվել, երբ տվյալ միավորումից մեկ, մի քանի կամ բոլոր անդամների շահերին վնաս է հասցվում:

5. Որոշ դեպքերում որոշակի ասոցիացիաներ/ միավորումներ օրենքով ուղղակիորեն օժտված են իրենց անդամների կոլեկտիվ շահերը դատական կարգով պաշտպանելու իրավունքով, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում հաշմանդամ աշխատակիցների պաշտպանությամբ զբաղվող միավորումների, գրանցված սպառողների միավորումներ, գրանցված ներդրողների միավորումներ, շրջակա միջավայրի պաշտպանության գրանցված միավորումներ⁹:

6. Հանրային շահի պաշտպանության իրավունքը զարգանում է նաև դատական պրակտիկայի շնորհիվ: Այսպես, չնայած ըստ Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ միայն սահմանափակ թվով միավորումներ են իրավասու ներկայացնել հանրային շահի պաշտպանության հայց, սակայն դատավարական պրակտիկայում գրանցվել են նախադեպեր, երբ դատարանները հաստատում են չգրանցված միավորումների կողմից հայց հարուցելու հնարավորությունը, եթե տվյալ հանրային շահի պաշտպանությունը իրենց նպատակների մասն է կազմել¹⁰:

7. Որպես կանոն հանրային շահերի պաշտպանության նպատակով հանդես են գալիս կազմակերպությունները, որոնց այդ իրավունքը ուղղակիորեն սահմանված է օրենքով: Օր՝ Գերմանիայի սպառողների պաշտպանության վերաբերյալ օրենքների շրջանակներում անօրինական գործողությունների դադարեցման և այն չվերսկսելու

⁹ Գրանցվելու համար ասոցիացիան պետք է համապատասխանի տարբեր պահանջներին, այդ թվում՝ (i) ծառայել ընդհանուր բարեկեցությանը (ii) ունենալ ժողովրդավար կառավարում, և (iii) համապատասխանել Ֆրանսիայի թափանցիկ գործունեություն ծավալելու կանոններին

¹⁰ Տե՛ս՝ Cass. 2e civ., 27 May 2004 ; Cass. 3e civ., 26 September 2007.

պահանջով կարող են հայց հարուցել Սպառողների միավորումները, որոնք գրանցված են կամ Արդարադատության Դաշնային գրասենյակի (*Bundesamt für Justiz*) կողմից հրապարակված տարեկան ցուցակում, կամ էլ՝ Եվրոպական հանձնաժողովի ցուցակում:

8. ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված է անհատների կամ հասարակական կազմակերպությունների իրավունքը դատական հայց ներկայացնել գործունեությունը դադարեցնելու կամ կանխելու վերաբերյալ, որն ամենայն հավանականությամբ վնաս կպատճառի հայցվորներին և հանրությանը: Դատական պրակտիկան նման գործունեության թվին է դասում շինարարական և արդյունաբերական արտադրությունը (մաքրում, էներգետիկա, մետալուրգիա, այլ տիպի արտադրություններ) կամ հանրային բարոյականության դեմ ուղղված գործունեությունը (ինչպես օրինակ՝ մոլեխաղերի բիզնեսը):

Վարչական իրավունքի շրջանակներում

9. Կազմակերպությունները/միությունները կարող են թե նորմատիվ թե անհատական իրավական ակտը անվավեր ճանաչելու նպատակով վարույթ հարուցել, եթե տվյալ ակտով խախտվում են այն հանրային շահերը, որոնց պաշտպանությանն է ուղղված միության գործունեությունը, որոշ դեպքերում այդ կազմակերպությունների այս իրավունքը պետք է ամրագրված լինի ուղղակիորեն համապատասխան ոլորտը կարգավորող օրենսդրական ակտի մեջ (օր՝ Գերմանիայում՝ բնապահպանական կազմակերպությունները (*Naturschutzverbände*) իրավասու են ներկայացնելու հանրային շահի պաշտպանությանն ուղղված հայցեր, որոնք առնչվում են կոնկրետ բնապահպանության օրենքների խախտմանը, ինչպես օրինակ՝ Ադոտովաձույթի Դաշնային Վերահսկողության Ակտը (*Bundesimmissionsschutzgesetz*) կամ Բնապահպանական Հակազդեցությունների Գնահատման Ակտը (*Gesetz über die Umweltvertraglichkeitsprüfung*), կամ նույն Գերմանիայում՝ Առողջապահության նախարարության կողմից պաշտոնապես ճանաչված հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունները (*Behindertenverband*) կարող են հաշմանդամների հանդեպ խտրականության որոշ դեպքերում պահանջել բացատրական դատավճիռ (*Feststellungsklage*):

Քրեական դատավարության շրջանակներում

10. Ֆրանսիայում որոշ, սահմանափակ քանակությամբ միավորումներ լիազորված են քրեական դատավարություն սկսել, կամ միանալ քրեական դատավարությանը հանրային շահի պաշտպանության նպատակով: Տվյալ դեպքում օրենքը պետք է ուղղակիորեն սահմանի միությունների որոշակի ձևերի համար քրեական գործերով գործի կողմ հանդիսանալու հնարավորությունը:

III. Դատական ո՞ր մարմիններում և ատյաններում է կարելի հանրային շահի պաշտպանության նպատակով հայց հարուցել, ի՞նչ ընթացակարգով է կատարվում գործի քննությունը, որո՞նք են դատական գործի քննության հիմնական սկզբունքները:

11. Հանրային շահի պաշտպանության նպատակով հարուցված հայցերի համար որպես կանոն առանձնահատուկ ընթացակարգ սահմանված չէ: Յուրաքայուր դեպքում դատական հայցի քննությունը ընթանում է տվյալ մասնագիտացման (քաղաքացիական, վարչական, քրեական) և տվյալ ատյանի դատարանում գործի քննության համար սահմանված կանոններին համապատասխան:

12. Որոշ դեպքերում, օրինակ ՌԴ Արբիտրաժային դատավարության օրենսդիրքը պարունակում է առանձին գլուխ, որով սահմանված է մի խումբ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված գործերի քննության կարգը:

IV. Իրավական ո՞ր նորմերով (նյութական, դատավարական) է հնարավոր և անհրաժեշտ սահմանել հանրային շահի պաշտպանության նպատակով հայցի հարուցման իրավունքը և ընթացակարգերը:

13. Հանրային շահի պաշտպանության հայցով դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակում են ինչպես նյութական իրավունքի, այնպես էլ դատավարական իրավունքի ակտերը: Այսպես, նյութական իրավունքի նորմերով որոշ դեպքերում, սահմանվում է այն ոլորտների և կազմակերպությունների շրջանակը, որոնք իրավասու են նմանատիպ հայց հարուցել, իսկ դատավարական իրավունքի նորմերով կարգավորվում է հայցի հարուցման, քննության կարգը, որոշ դեպքերում նախատեսելով առանձին ընթացակարգեր, իսկ որոշ դեպքերում տվյալ դատարանում ընդհանուր՝ հայցի քննության կարգի շրջանակներում: Դատավարական նորմերով նաև կարող են սահմանվել այն սուբյեկտների շրջանակը, որոնք կարող են հայց հարուցել, նաև հղում կատարելով համապատասխան նյութական իրավունքի նորմերին:

V. Ինչպես են լուծվում դատական ծախսերի հետ կապված հարցերը հանրային շահի պաշտպանության նպատակով դատական գործեր հարուցելու դեպքում:

14. Պետական տուրքերի և դատական ծախսերի հարցը, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը յուրաքանչյուր դեպքում լուծվում է օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոններով:

Միջազգային իրավունքի նորմեր

Որպես, մասնավորապես հարցի վերաբերյալ գործող հիմնական միջազգային իրավունքի նորմ, ի թիվս արդար դատաքննության և դատական պաշտպանության մատչելիությունն ապահովող այլ նորմերով սահմանող փաստաթղթերի, անհրաժեշտ է հիշատակել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թ. դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» թիվ (2004)20 հանձնարարականը, որին հղում է կատարել նաև ՀՀ Սահամանադրական դատարանը իր 07.09.2010 թ. թիվ 906 որոշման մեջ:

Սույն հանձնարարականով սահմանված է, որ անդամ պետությունները քաջալերվում են ուսումնասիրելու, թե արդյոք դատական կարգով վերանայման հնարավորությունը չպետք է բաց լինի ընկերակցությունների կամ համայնքային կամ ընդհանուր շահեր պաշտպանելու իրավասությամբ օժտված այլ անձանց կամ կառույցների համար (Սկզբունք 2, կետ 1):

Նույն Հանձնարարականի Բացատրական հուշագրում այս դրույթին կատարված անդրադարձով նշվում է, որ հանձնարարականը քաջալերում է հասարակական կամ համայնքային շահերի պաշտպանության իրավունքով օժտված հասարակական կազմակերպություններին, միավորումներին, այլ անձանց կամ մարմիններին հնարավորություն տալ պաշտպանել այս իրավունքները և դրանց պաշտպանության նպատակով դիմել դատարան: Այստեղ խոսք է գնում այն վարչական ակտերի մասին, որոնք անդրադառնում են ոչ թե անհատի, այլ անձանց խմբերի շահերին: Ընդ որում «վարչական ակտ» հասկացության տակ ենթադրվում է 1. անհատական և նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են վարչական մարմնի կողմից և որոնք կարող են ազդել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների վրա, 2. գործողության մերժման կամ անգործության դեպքերը, երբ վարչական մարմնի ներկայացուցիչը պարտավոր է դիմումի հիման վրա վարույթ հարուցել:

Առաջարկություններ

Հաշվի առնելով, որ հանրային շահի պաշտպանության նպատակով դատարանում հայց հարուցելու և դատական գործի մասնակից դառնալու հնարավորությունը կարող է հանդիսանալ քաղաքացիական հասարակության և առհասարակ իրավունքի զարգացման կարևոր խթանիչ ուժերից մեկը և ավելին, հասարակական կազմակերպությունների համար տվյալ իրավունքի ամրագրումը բխում է նաև հասարակական կազմակերպությունների կողմից իրենց նպատակների արդյունավետ և լիարժեք իրականացման անհրաժեշտությունից՝

առաջարկվում է

1. Ուսումնասիրել և վեր հանել հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ պարունակող այն ոլորտները, որոնց շրջանակներում հանրային շահի պաշտպանության նպատակով հասարակական կազմակերպությունների կողմից ըստ առաջնահերթության հնարավոր կլինեն հանրային շահի պաշտպանության նպատակով դատական կարգով հայց հարուցելու իրավունքի ներդրումը: Մասնավորապես առաջարկվում է ուշադրություն դարձնել հաշմանդամների իրավունքների պաշտպանության¹¹, սպառողների իրավունքների պաշտպանության, ընտրական իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին, խտրականության դեմ պայքարի, բնապահպանական, պատմամշակույթային արժեքների պահպանության ոլորտում գործող իրավահարաբերություններին և մարդու իրավունքների ոլորտում այլ բնագավառներում:

2. Համապատասխան օրենսդրական փոփոխություն և լրացում կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, սահմանելով որ օրենքով կարող են նախատեսվել այլ անձինք և անձանց խմբեր, որոնք իրավունք կունենան այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով Վարչական դատարան հայց ներկայացնել:

3. Համապատասխան օրենսդրական փոփոխություն և լրացում կատարել առանձին ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերում, սահմանելով տվյալ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների համար հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի հնարավորությունը: Մասնավորապես, առաջնայնության սկզբունքով առաջարկվում է նման դրույթներ ներառել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի և «Խտրականության դեմ» ՀՀ օրենքի նախագծում:

¹¹ Հաշմանդամների իրավունքների պաշտպանության նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից առաջարկվել է տվյալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար սահմանել տվյալ իրավունքը ներկայումս մշակման փուլում գտնվող «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի մեջ, սակայն առաջարկը գնահատվել է ժամանակավորապես: